«Տալենտում» տաղանդների կրթական և զարգացման 2022/2023թթ. ծրագրին դիմելու
ԿԱՐԳ

ք. Երևան, ՀՀ «20» հոկտեմբեր, 2022թ.

Հիմնադիր՝
«Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամ

Գեղարվեստական ղեկավար՝
Սերգեյ Սմբատյան

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) մեկնարկում է «Տալենտում» տաղանդների կրթական և զարգացման 2022/2023թթ. ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր) 10-16 տարեկան տաղանդավոր երիտասարդ երաժիշտների համար՝ հետևյալ մասնագիտությունների գծով.

- ջութակ
- ալտ
- թավջութակ
- ֆլեյտա
- հոբոյ
- կլարնետ
- ֆագոտ
- գալարափող
- շեփոր
- տրոմբոն
- հարվածային գործիքներ
- դաշնամուր
- տավիղ

1.2. Մրցութային ունկնդրումների փուլերը հաղթահարած դիմորդները ընդգրկվում են որպես կրթաթոշակառուներ Հիմնադրամի «Տալենտում» տաղանդների կրթական և զարգացման 2022/2023թթ. ծրագրի շրջանակում:

2. Մրցույթի անցկացման փուլերը

2.1. Ծրագիրն ընթանում է հետևյալ փուլերով.

- Դիմում-հայտի, անհրաժեշտ փաստաթղթերի և տեսաձայնագրությունների ընդունում:
- Ունկնդրումների անցկացում երկու փուլով.
  1-ին փուլ՝ տեսաձայնագրությունների ունկնդրում,
  2-րդ փուլ՝ կենդանի ունկնդրումներ Երևանում:
- Հարցազրույց Հիմնադրամի տնօրենի հետ:
- Արդյունքների ամփոփում և կրթաթոշակառուների ընտրություն:
- Պայմանագրերի կնքում:

3. Ծրագրին դիմելու պահանջներն ու պայմանները

3.1. Ծրագրին դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- Դիմորդի Օրինական ներկայացուցչի՝ ծնողի կամ խնամակալի (այսուհետ՝ Օրինական ներկայացուցիչ) կողմից լրացված դիմում-հայտ (Հավելված 1):
- Դիմորդի կողմից ներկայացվող ծրագրի տեսաձայնագրություն (վիդեոձայնագրություն):
- Տեղեկանք դիմորդի երաժշտական հաստատությունից առ այն որ նա հանդիսանում է տվյալ երաժշտական հաստատության աշակերտ/ուսանող՝ նշելով դասարանը, բաժինը, մասնագիտությունը:
- Դիմորդի անձնագրի պատճեն (գլխավոր և ծնողների/ծնողի մասին նշումով էջեր), իսկ չունենալու դեպքում՝ ծննդյան վկայականի պատճեն:
- Դիմորդի <u>փաստացի բնակության վայրի</u> (<u>ոչ հաշվառման վայրի</u>) մասին տեղեկանք:
- Դիմորդի Օրինական ներկայացուցչի դրամային բանկային հաշվի առկայության մասին տեղեկանք բանկից (ոչ քաղվածք, ոչ մնացորդ, այլ՝ դրամային բանկային հաշվի ռեկվիզիտների (հաշվեհամար, արժույթ՝ ՀՀ դրամ, և բանկ) մասին տեղեկանք) (այն հաշվեհամարի, որին դիմորդի՝ կրթաթոշակառու դառնալու դեպքում կփոխանցվի կրթաթոշակը):

3.2. Վերոնշյալ փաստաթղթերը և դիմորդի տեսաձայնագրության հղումն անհրաժեշտ է 1 նամակով ուղարկել Հիմնադրամի talentum@m4f.foundation էլեկտրոնային փոստի հասցեին: Ներկայացվող տեսաձայնագրությունը պետք է ուղարկել YouTube-յան հղման տեսքով, որը պետք է նշվի հայտի և էլեկտրոնային նամակի տեքստի մեջ: Իսկ նամակի վերագիրը (Subject) պետք է նշվի անգլերենով՝ հետևյալ կերպ՝ Application 2022 և դիմորդի անուն-ազգանունը (օրինակ՝ Application 2022 Petros Petrosyan):

3.3. Դիմում-հայտն անհրաժեշտ է լրացնել կա՛մ համակարգչով, կա՛մ տպված վիճակում՝ ընթեռնելի տպատառերով (ոչ ձեռագրով): Երկու դեպքում էլ դիմում-հայտը լրացնելուց հետո անհրաժեշտ է այն

տպված վիճակում ստորագրել և ուղարկել ստորագրված և սկանավորված դիմում-հայտը վերը նշված տարբերակով:

3.4. Դիմում-հայտի ներկայացումը վկայում է, որ դիմորդի Օրինական ներկայացուցիչը և դիմորդը.

- ծանոթացել են, համաձայն են և անվերապահորեն ընդունում են սույն կարգի բոլոր դրույթները,
- ծանոթացել են, համաձայն են և անվերապահորեն ընդունում են «Երաժշտություն հանուն ապագայի» մշակութային հիմնադրամի «Տալենտում» տաղանդների կրթական և զարգացման 2022/2023թթ. ծրագրի Կանոնակարգի բոլոր դրույթները (փաստաթուղթը կցվում է առանձին),
- առանց առարկության ընդունում են ժյուրիի կողմից գրանցվելիք արդյունքները (կայացվելիք որոշումը),
- համաձայն են, որպեսզի Ծրագրի շրջանակներում դիմորդի մասնակցությամբ արված լուսանկարները, աուդիո նյութերը և տեսանյութերը (այդ թվում՝ Ծրագրին դիմելիս ներկայացվող տեսաձայնագրությունները) օգտագործվեն, տարածվեն և հանրայնացվեն Հիմնադրամի կողմից,
- տալիս են իրենց համաձայնությունը Հիմնադրամին՝ իրենց կողմից տրամադրած անձնական տվյալների և տեղեկատվության՝ սույն Ծրագրի շրջանակներում մշակելու համար:
- պատասխանատու են իրենց ներկայացրած տեղեկատվության և տեսաձայնագրության ճշգրտության, հավաստիության և սույն կարգում նշված պահանջներին բավարարելու համար:

3.5. Ծրագրին դիմելու համար դիմորդներին ներկայացվող պարտադիր պահանջներն են.

- Դիմորդը պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի և բնակվի Հայաստանում:
- Դիմորդը պետք է լինի ՀՀ երաժշտական/արվեստի դպրոցի կամ երաժշտական/արվեստի քոլեջի սան և նպատակ ունենա շարունակել իր ուսումը նույն մասնագիտությամբ, որով դիմում է ծրագրին:
- Դիմորդի տարիքը դիմում-հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պետք է լինի 10-16 տարեկանը ներառյալ:

3.6. Ներկայացվող փաստաթղթերի և տեսաձայնագրության թերի լինելու, ինչպես նաև սույն կարգում նշված պայմաններին չբավարարելու դեպքում դիմորդների հայտերը ենթակա են մերժման, ինչի մասին դիմորդները նախապես կտեղեկացվեն:

4. Ժամանակացույց

«Տալենտում» 2022/2023թթ. ծրագրին դիմելու համար փաստաթղթերի և տեսաձայնագրության ընդունման ժամկետն է **մինչև 2022թ. նոյեմբերի 10-ը ներառյալ**:

Մի՛ սպասեք վերջին օրերին ծրագրին դիմելու համար:

4.1. Ստացված դիմում-հայտերի ամփոփումից և ունկնդրումների 1-ին փուլի ավարտից հետո դիմորդները գրավոր կտեղեկացվեն ժյուրիի որոշման մասին մինչև ս./թ. դեկտեմբերի 5՝ իրենց դիմում-հայտերում նշված էլ. փոստերին ուղարկված նամակի տեսքով:
Դիմորդի՝ ունկնդրումների 2-րդ փուլ անցնելու դեպքում ունկնդրումներին մասնակցության մանրամասները (այդ թվում՝ անցկացման վայրը և ժամը) նրան կուղարկվեն հրավերի տեսքով:

4.2. Ունկնդրումների 2-րդ փուլը կանցկացվի ս./թ. դեկտեմբերի 15-ից դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում, որի ավարտից հետո դիմորդները գրավոր կտեղեկացվեն ժյուրիի որոշման մասին:

4.3. Դեկտեմբերի 26-27 ընկած ժամանակահատվածում կանցկացվի հարցազրույց Հիմնադրամի տնօրենի հետ:

4.4. Կրթաթոշակառուներին հայտարարելուց հետո նրանց Օրինական ներկայացուցիչների հետ 10 աշխատանքային օրվա ընթացքում կկնքվի պայմանագիր:

4.5. Հիմնադրամը կարող է վերանայել վերոնշյալ ժամանակացույցը՝ կախված ներկայացված հայտերի քանակից:

5. Ելույթի գնահատման չափորոշիչները

5.1. Գնահատման չափորոշիչներն են.

- Ընտրված ծրագրի համապատասխանությունը մասնակցության պահանջներին, մասնակցի տարիքային և անհատական առանձնահատկություններին:
- Ստեղծագործության/ների կատարողական մեկնաբանության գեղարվեստական արժանիքները:
- Կատարողի տեխնիկական հմտությունների մակարդակը:

6. Ունկնդրումներ

6.1. Ունկնդրումների և՛ 1-ին փուլի ժամանակ՝ տեսաձայնագրություն ուղարկելիս, և՛ 2-րդի՝ կենդանի ունկնդրումների ժամանակ դիմորդը պետք է.

- հանդես գա իր ընտրությամբ ազատ ծրագրով (1 կամ մի քանի ստեղծագործություն), որը պետք է կատարվի անգիր և որն իր կարծիքով լավագույնս կներկայացնի իրեն՝ որպես առաջադրված թեկնածուի: Ներկայացվող ծրագրի տևողությունը պետք է լինի առավելագույնը 15 րոպե:
- հանդես գա մենանվագ ստեղծագործության կատարումով (որպես մենակատար): Եթե ներկայացվող ստեղծագործությունը/ները կատարվում են նվագակցությամբ, ապա դիմորդը պետք է ինքնուրույն ապահովի նվագակցություն ունկնդրումների երկու փուլի ընթացքում էլ:

6.2. Տեսաձայնագրության սկզբում դիմորդը նախ պետք է ներկայանա՝ ասելով իր անուն-ազգանունը, և նշի հետևյալը. «Տեսաձայնագրությունն արվում է «Տալենտում» 2022/2023թթ. ծրագրին դիմելու համար»:

Եթե դիմորդը հանդես է գալիս մի քանի ստեղծագործությամբ, ապա նա.

- կա՛մ յուրաքանչյուր ստեղծագործության համար ներկայացնում է առանձին YouTube-յան հղում և յուրաքանչյուր տեսաձայնագրության սկզբում ներկայանում է վերոնշյալ ձևով,
- կա՛մ ներկայացնում է 1 տեսաձայնագրություն, որի սկզբում ներկայանում է վերոնշյալ ձևով:

Ուշադրությու՛ն

- Եթե դիմորդը յուրաքանչյուր ստեղծագործության համար կատարում է առանձին տեսաձայնագրություն, ապա յուրաքանչյուրի սկզբում անուն-ազգանունն ասելն ու նշելը, որ տեսաձայնագրությունն արվում է «Տալենտում» 2022/2023թթ. կրթական ծրագրին դիմելու համար», պարտադիր պայման է:

- Նաև, այս դեպքում, բոլոր առանձին ներկայացված ստեղծագործությունների գումարային տևողությունը չպետք է գերազանցի 15 րոպեն:
- Տեսաձայնագրությունները չպետք է լինեն մոնտաժված և ձայնագրությունը չպետք է ենթարկված լինի մշակման:

6.3. Տեսաձայնագրությունը պետք է լինի արդի և պետք է արված լինի ս./թ. հոկտեմբերի 25-ից սկսած: Չի թույլատրվում ներկայացնել դիմորդի համերգից արված տեսաձայնագրություն: Տեսաձայնագրությունը պետք է լինի ամբողջական, չմոնտաժված, նկարահանված լինի 1 տեսախցիկով, ստատիկ ձևով և լինի բարձր որակով (նվազագույնը՝ HD 720p որակով): Տեսաձայնագրությունը հեռախոսով կատարելու դեպքում տեսախցիկը պետք է պահվի հորիզոնական: Տեսագրության մեջ պետք է երևան մենակատարի գործիքն ամբողջությամբ (դաշնամուրի դեպքում՝ ստեղնաշարը), մենակատարի գլուխը, ձեռքերը և մատները:

Ուշադրությու՛ն

Տեսաձայնագրությունները ստուգվելու են, և կարգում նշված պայմաններին չհամապատասխանելու դեպքում դիմորդը որակազրկվելու է:

6.4. YouTube-յան տեսաձայնագրությունը պետք է անվանել հետևյալ կերպ (անգլերենով)՝ դիմորդի անուն և ազգանուն-Գործիք-Talentum (օրինակ՝ Petros Petrosyan-Piano-Talentum), իսկ տեղադրված տեսաձայնագրության YouTube-յան նկարագրության (Description) մեջ պետք է անգլերենով նշել կատարվող ստեղծագործության/ների ցանկը: Մի քանի YouTube-յան հղում ուղարկելու դեպքում՝ համարակալել վերնագրերը (օրինակ՝ Petros Petrosyan-Piano-Talentum-1):

6.5. Ունկնդրումների 2-րդ փուլի ընթացքում դիմորդը կարող է հանդես գալ նույն ծրագրով, ինչ 1-ին փուլում՝ տեսաձայնագրության ընթացքում:

6.6. Դիմորդի՝ ունկնդրումների 2-րդ փուլին՝ Երևանյան լսումներին մասնակցության ծախսերը (օր.՝ տրանսպորտային ծախսեր) հոգում է դիմորդը/օրինական ներկայացուցիչը:

6.7. Դիմորդի՝ լսումների 2-րդ փուլ անցնելու, բայց լսումներին ներկայանալ չկարողանալու դեպքում դիմորդը/օրինական ներկայացուցիչն այդ մասին նախապես 5 օր առաջ գրավոր ձևով պետք է տեղյակ պահի Հիմնադրամին:

7. Ժյուրի

7.1. Դիմորդներին ունկնդրելու են միջազգային ժյուրիի ներկայացուցիչներ:

7.2. Ունկնդրումների 2-րդ փուլի ընթացքում ժյուրին իրավունք ունի կանգնեցնել դիմորդի նվագը:

7.3. Ժյուրիի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

8. Արդյունքների ամփոփում և կրթաթոշակառուների խրախուսում

8.1. Արդյունքների ամփոփումից հետո ընտրված լավագույն կրթաթոշակառուների Օրինական ներկայացուցիչների հետ կնքվելու է կրթաթոշակառուի աջակցության (խրախուսման) պայմանագիր 1 տարի ժամկետով: